,, Բազուայ Հայ հոգեւորականութիւնը իր այժմեան բարեկարգութեամբ և պատուաճանաչութեամբ, և եկեղեցին իւր կարգաւորութեամբ, բարեզարդութեամբ և փառաւորութեամբ պարտական են այն արթուն, ժողովրդասէր հովուի անդուլ հոգատարութեանցը։

,, Մի առ մի թուել արժանայիշատակ ցէր Թադէոսի անձնանուէր ծառայութիւնքը և նորա անխնայ՝ առատ նուիրաբերութիւնքը, յօգուտ ազգի և եկեղեցւոյ՝ կը թողում ժամանակակից պատմագրի։ Այլ բարի լուրերից տեղականալով իմանում ենք, որ դուք ըստ ամենայնի Ձեր ազգաշահ գործերովը աշխատումէք հանգուցելոյ յիշատակը փառաւորել և Սողոմոն իմաստունի խօսքը Ձեզ վրայ ցոյց տալ, որ ասէ «Որդիք հարազատք զնմանութիւն Հօրն բերեն յինքեանս»։

,, Ձեզանից ամէն մէկը, ինչպէս հանգուցելոյ հարազատ որդիք և ժառանգք։ Նորա առաքինական գովելի յատկութիւնքը Ձեր անձի մէջ կրելով, պէտք է ապաքէն Նորանման փայլիք Ձեր բարեգործութիւններով, որով թէ առաւել եւս բարձրացրած կլինիք նրա անունը և յիշատակը, և թէ արժանաւոր հօր արժանաւոր ժառանգներ կը հանդիսանաք Հայ հասարակութեան մէջ։ Ցիրաւի, ինչպէս հաւաստիացնում է մեզ տեղւոյդ գործակալ, բարեկրօն Խորէն Աւագ քահանայն, հանգուցելոյ ազնիւ զգացմունքները եւ բարեմասնութիւնքը նշմարվում են Ձեր մէջ։ Ամեն բարենպատակ եւ Աստուածահաճոյ ձեռնարկութեանց մէջ՝ դուք առաջին տեղն էք բռնում, եւ Ձեր ձգտումները ուղղուած են դէպի աւելի բարձր եւ վսեմ ազգօգուտ ձեռնարկութիւններ։

Սաղիանու Սուրբ Ստեփաննոսի վանքի շինութեան Տօմարի մէջ կարդացի հանգուցեալ Թադէոս Աւագ քահանայի կտակաւանդութեամբ թողած առատ նուէրքն 'ի նպաստ այն շինութեան։

,, Ըստ որում Սաղիանու վանքը արդէն շինուած վերջացած է, որն եւ անցեալ նոյեմբերի 8 ին փառաւոր հանդիսով օծեցինք. բայց այն հռչակաւոր վանքը մի մեծ պակասութիւն եւս ունի եւ անհրաժեշտ պէտք, այն է վանական դպրոց, ուր ինչպէս նախնումն է եղել, կրթել պատրաստել մեր Հայ ժողովրը-